Ա՝ 8959

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«08» 08 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 202-25

Նախաձեռնող՝ *Քաղաքացի Ռոբերտ Գասպարյան*
ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Դեմիրճյան փողոց 2-4

Գործունեությունը՝ *Երևանի Կենտրոն վարչական շրջանի Դեմիրճյան փողոց 2-4 հասցեում բնակելի բազմաֆունկցիոնալ շենքի կառուցում*
ք. Երևան

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 202-25

«08» սեպտեմբեր **2025թ.**

Երևանի Կենտրոն վարչական շրջանի Դեմիրճյան փողոց 2-4 հասցեում նախատեսվող բնակելի բազմաֆունկցիոնալ շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	քաղաքացի Ռոբերտ Գասպարյան
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Երևան քաղաք, Կենտրոն վարչական շրջան

Ներածական մաս. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Դեմիրճյան փողոց 2-4 հասցեում նախատեսում է բնակելի բազմաֆունկցիոնալ շենքի կառուցման աշխատանքներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի ա. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 12062025-01-0331 վկայականը, Երևան համայնքի կողմից 2025թ. հունիսի 26-ին տրված N ՆԹ-5090-25 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Հողամասի կադաստրային ծածկագիրն է՝ 01-006-0028-0213, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Նախատեսվող բնակելի բազմաֆունկցիոնալ շենքի գործունեության տարածքը գտնվում է Կենտրոն վարչական շրջանի Դեմիրճյան փողոց 2-4 հասցեում:

Նախատեսվող գործունեության տարածքում նախկինում՝ այլ կառուցապատողի կողմից իրականացվել են հողային և բետոնացման աշխատանքներ:

Գեոմորֆոլոգիական տեսակետից նախատեսվող գործունեության տարածքին բնորոշ ռելիեֆային հիմնական տարրերն են՝ Կոտայքի հրաբխային սարավանդների լանջերի

հարավային ծայրամասերը, որոնք հյուսիսից հարավ հարում են Երևանի ցածրադիր գոտուն: Հողամասը խիստ ռելիեֆային է, որի բացարձակ նիշերը տատանվում են 1030.0-1035.0 մետրերի սահմաններում:

Գործունեության տարածքի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պլիոցեն դարակարգի հրաբխային արմատական ապարները՝ բազալտները, խիճ, խճավազը, բեկորները:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ՝ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են:

Նախատեսվող գործունեության տարածքի հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են կառուցապատման աշխատանքների համար՝ նախկինում տվյալ տեղամասում մինչև 50 մետր խորությամբ փորված հորատանցքերով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել:

Գնահատման հաշվետվությամբ ներկայացված ինժեներաերկրաբանական եզրակացության համաձայն՝ նախատեսվող գործունեության տարածքի ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ գործունեության ենթակա տարածքը չի առնչվում բնության և պատմամշակութային հուշարձանների հետ, տարածքում Կարմիր գրքերում գրանցված կենդանատեսակներ և բուսատեսակներ չեն հայտնաբերվել:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում ծառաթուփային բուսականությունը, հողաբուսաշերտը բացակայում է:

Հողամասում առկա է քանդման ենթակա շինություն:

Նախատեսվող բնակելի բազմաֆունկցիոնալ շենքը կունենա ուղղանկյունաձև հատակագծային լուծում, բաղկացած կլինի 3 ստորգետնյա, 2 կիսանկուղային, 8 վերգետնյա հարկերից, շահագործվող տանիքից, որտեղից կիրականացվի կազմակերպված ներքին ջրահեռացում:

Բնակելի բազմաֆունկցիոնալ շենքը կունենա երկկողմանի ճանապարհային սպասարկման հնարավորություն:

Նախատեսվող բնակելի բազմաֆունկցիոնալ շենքի -10.500, -7.000 և -3.500 նիշերում գտնվող հարկերը նախատեսված կլինեն որպես ավտոկայանատեղիներ՝ 116 մեքենաների համար, 0.000 և 3.900 նիշերում գտնվող հարկերը կլինեն կիսանկուղային, 0.000 ից մինչև 11.700 նիշերում գտնվող հարկերը կօգտագործվեն որպես հասարակական նշանակության, իսկ 15.600-ից մինչև 33.900 նիշերում գտնվող հարկերը՝ որպես բնակելի տարածքներ: Ընդհանուր առմամբ կնախատեսվի մոտ 34 բնակարան: Բոլոր հարկերում նախատեսվում են հակահրդեհային և ինքնափակվող աստիճանավանդակների դռներ, կազմակերպված էվակուացիոն ելքեր, տանիքում ուղղահայաց աստիճաններ:

Ստորգետնյա հարկերում նախատեսվում է էլ. ենթակայան, պոմպակայան և այլ ինժեներական ենթակառուցվածքներ, իսկ տեխնիկական հարկում՝ կաթսայատուն:

Նախատեսվող բնակելի բազմաֆունկցիոնալ շենքի տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են՝

- հողի մակերեսը՝ 2652,52 քմ,
- կառուցապատման մակերեսը՝ 1375,53 քմ, 51,86 %,
- կանաչապատման մակերեսը՝ 1061,8 քմ, 40,02 %,
- անջրանցիկ մակերևույթների մակերեսը՝ 215.19 քմ, 8,12 %,

- -1 ստորգետնյա հարկի մակերեսը՝ 2123.66 քմ,
- -2 ստորգետնյա հարկի մակերեսը՝ 2123.66 քմ,
- -3 ստորգետնյա հարկի մակերեսը՝ 2173 քմ,
- ստորգետնյա հարկերի ընդհանուր կառուցապատման մակերեսը՝ 6420 քմ,
- շինարարական մակերեսը՝ 20462,24 քմ:

Շենքի բարձրությունը նախատեսվում է 39.1 մ՝ շենքի պարապետի նիշ /սահմանված ՃՀԱ-ով/, տեխնիկական հարկի առավելագույն բարձրություն՝ 2.6 մ:

Ջեռուցումը և օդափոխությունը ողջ համալիրում իրականացվելու է անհատական լուծմամբ՝ օդորակիչների և ջեռուցման կաթսաների միջոցով:

Նախատեսված է օդափոխության արհեստական համակարգ, արտածումն իրականացվելու է արտածման համակարգերի միջոցով, օդահեռացումը երկու՝ վերևի և ներքևի հատվածներից:

Բնակելի բազմաֆունկցիոնալ շենքի էներգախնայողության և էներգաարդյունավետության համար նախատեսվում է իրականացնել երեսպատման համակարգ, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհաններ և վիտրաժներ, տանիքի հարկի ջերմամեկուսացում և այլն: Ջերմության խնայողության համար նախատեսվում են նաև ջերմաօգտհանիչներով օդի ներածման համակարգեր, որոնք ապահովում են ջերմության բարձր խնայողություն:

Համաձայն շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ՝ նախատեսվել են թեքահարթակներ:

Բնակելի բազմաֆունկցիոնալ շենքի ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է՝ համաձայն գործող պայմանագրի: Ջրահեռացումը կիրականացվի՝ միանալով Բաղրամյան պողոտա D=300 մմ կոյուղատարին, հեղեղատարը՝ Բաղրամյան պողոտա D=600 մմ հեղեղատարին, հրդեհաշիջումը՝ Դեմիրճյան փողոց D=300 մմ ջրագիծից:

Շինարարության ընթացքում ժամանակավոր ջրամատակարարման համար ջրի հիմնական աղբյուր կհանդիսանա համայնքային ջրամատակարման ցանցը, իսկ խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում էլեկտրամատակարարումը կիրականացվի ցանցից, իսկ շահագործման փուլում՝ համաձայն տեխնիկական պայմանի 135,6 կՎԱ դրվածքային հզորությամբ, ստորգետնյա հարկում՝ (-3.5 նիշ) նախատեսվող նոր ենթակայանից:

Շենքի գազամատակարարումը՝ 116խմ/ժ ծախսով, նախատեսվում է իրականացնել համաձայն տեխնիկական պայմանի՝ ԳԲԿ Ջրվեժ սնող D=300 մմ կողմնատար գազատարից:

Գործունեության ընթացքում շինարարական նյութերից օգտագործվելու են ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար:

Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն՝ տեղադրելով բիոզուգարաններ, որոնց սպասարկումը կիրականացվի մատակարար ընկերության կողմից:

Նախատեսվող գործունեության ընթացքում կիրականացվեն հիմքերի փորման աշխատանքներ՝ ե/բ հիմքերի տեղադրման համար կիրականացվեն մոտ 17584 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքներ: Հանվող հողային զանգվածը շինարարական հրապարակում չի պահվելու, այն ամբողջությամբ տեղափոխվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, հետագայում հետլիցքի համար անհարժեշտ գրունտը կբերվի գործունեության տարածք:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել՝ համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս, կտկվեն ծառեր և թփեր:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա ազդեցությունները կապված կլինեն փորման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված կլինեն՝ հիմքերի փորման ընթացքում առաջացող փոշու, շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ վառելիքի (CO, NOx), եռակցման աշխատանքների ընթացքում աերոզոլի և մանգանի օքսիդների արտանետումների հետ:

Շինարարության կազմակերպման և շինարարական աշխատանքների ժամանակ նախատեսվում են շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսների, մթնոլորտային օդի) պահպանության համար բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնցից են՝

- քանդման և շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում ջրցանի իրականացում, ժամանակակից լուծումներով, ջրցան թնդանոթի միջոցով,
- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում՝ ավազ, խիճ, հող և այլն) տեղափոխում փակ ծածկով մեքենաներով, սորուն նյութերի ժամանակավոր պահեստների ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը հնարավորինս կկանխարգելի փոշու տարածումը,
- շինարարության ընթացքում շենքերի արտաքին մասի ծածկում անթափանց թաղանթով,
-փոշենստեցման համար ջրցանի այնպիսի ծավալների իրականացում, ինչը հնարավորինս չի չառաջացնի մակերևութային հոսքեր,
-հոսքաջրերի հեռացում պարզարան, մեխանիկական նստեցում, նստվածքի հեռացում,
- շինարարական նյութերի բետոնապատ մակերեսի վրա տեղադրում,
- շինարարական գործընթացներում շինարարական տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով այդ տարածքներում սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակի ապահովում, ժամանակակից տեխնիկականն միջոցների օգտագործում և այլն:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված կետերում: Գործունեության տարածքում քսայուղեր և վառելանյութ չեն պահեստավորվելու:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Շաղախը և բետոնը կառաքվեն Երևանի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածություն չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ՝ ուղղված հնարավոր բացասական ազդեցությունների նվազեցմանը ու կանխարգելմանը:

Գնահատման հաշվետվության համաձայն՝ շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակների (հրդեհի առաջացում, հեղուկ նյութերի արտահոսք, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն), այդ թվում նաև աղմուկի և թրթռումների հնարավոր ազդեցության բացառման, նվազեցման, կենսաբազմազանության պահպանման համար ևս նախատեսվում են մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք նկարագրված են գնահատման հաշվետվության համապատասխան բաժիններում:

Նախատեսված բնապահպանական միջոցառումներ ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, շինարարական աղբը, որն ամբողջությամբ կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող, ինչը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, եռակցման աշխատանքերից առաջացող եռակցման խարամ, յուղոտված լաթեր, որոնց կուտակումը կիրականացվի բետոնե կամ խճաքարով պատված հարթակներում, շահագործման փուլում տրանսֆորմատորային ենթակայանում առաջացող հատկությունը կորցրած բանեցված յուղեր, որոնք կհավաքվեն մետաղյա տարողությունների մեջ և կհանձնվեն նշված թափոնների վերամշակմամբ զբաղվող ընկերություններին:

Նախատեսվող կանաչապատման աշխատանքները կիրականացվեն Երևանի քաղաքապետարանի համաձայնեցմամբ՝ բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, Կառավարության 2018թ. փետրվարի 8-ի N108-Ն որոշման համապատասխան: Նախատեսվող կանաչապատման աշխատանքերի համար անհրաժեշտ բուսահողի՝ մոտ 200 խմ. ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Երևանի քաղաքապետարանի հետ: Կանաչապատ տարածքների ոռոգումն իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից:

Նախատեսված բնապահպանական բոլոր միջոցառումները ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսված է իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները՝

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
2. փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում, տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ,
3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով՝ հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,

4. աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:
5. նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումներ, որի ընթացքում կպչողականություն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով,
6. հարակից տարածքներում կենսաբազմազանության մոնիթորինգ՝ 3 ամիսը մեկ հաճախականությամբ:
Երևանի քաղաքապետարանի որոշման համաձայն՝ շինարարական հրապարակում կտեղադրվեն փոշու առցանց չափող սարքեր:

Շինարարաության ընթացքում մշտադիտարկումների և բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է հատկացնել 2650000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հանրային ծանուցումը և լսումներն իրականացվել են Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի նստավայրում:

Հանրային լսումների ժամանակ գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Գնահատման հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Երևանի քաղաքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, որոնք հաշվի են առնվել ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումում:

Փորձաքննության գործընթացում հաշվի առնելով նախատեսվող գործունեության ՀՀ ազգային ժողովին հարակից լինելը՝ ՇՄԱԳ հաշվետվությունը ներկայացվել է ՀՀ ազգային ժողով և պետական պահպանության ծառայություն, որոնց կողմից ստացվել են դրական կարծիքներ:

Ամփոփելով գնահատման հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ: Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են փորման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:
3. Բետոնի տեղափոխումն իրականացնել ՇՄԱԳ-ում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
4. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինաղբի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:
5. Կանաչապատումն իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան և տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել համապատասխան Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված «Բարեկարգման, արդիականացման և կանաչապատման» նախագծի:
6. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
7. Վերջնական նախագծում և շինարարական աշխատանքների ընթացքում հաշվի առնել սպասարկող կազմակերպությունների կողմից տրամադրված տեխնիկական պայմանները:
8. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Քաղաքացի Ռոբերտ Գասպարյանի կողմից ներկայացված Երևանի Կենտրոն վարչական շրջանի Դեմիրճյան փողոց 2-4 հասցեում նախատեսվող բնակելի բազմաֆունկցիոնալ շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝ Նելլի Նասիբյան